ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 0042, ՀՀ, Հեռ.՝ (37410) 593-030, Ֆաքս՝ (37410) 285-345, էլ. փոստ՝ gdca@aviation.am

N 1.4/16/2141-16

«28» 11 2016 թ.

ԻԱԿ նախագահ Լիանա Դոյդոյանին

Հարգելի Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 310-ի1 գրությամբ ներկայացված գերատեսչությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ հարցման, ներկայացնում ենք ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պատասխանը.

Գլխավոր վարչությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձ է նշանակվել վարչության մամլո քարտուղար Սաթենիկ Հովհաննիսյանը:

Գլխավոր վարչության կայքում՝ aviation.am-ում, տեղադրված է ՏԱ պատասխանատու անձի մասին տեղեկատվությունը, որին կարող եք ծանոթանալ՝ այցելելով կայքի «Դիմեք մեզ» բաժին կամ հետևելով հղմանը http://aviation.am/index.php/hy/contacts:

Նամակին կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2014 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու

4. Գլխավոր վարչության աշխատակազմի ղեկավար Ս. Հակոբյանին՝ ապահովել Գլխավոր վարչության տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը Գլխավոր վարչության ինտերնետային վեբ կայքէջում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Գլխավոր վարչության պետ Ա. Մովսեսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«11» 11 2016թ.

ՀՐԱՄԱՆ N 201-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 240-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետի 2014 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին» N 240-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «քարտուղար Ռուբեն Գրդզելյանին» բառերը փոխարինել «քարտուղարին» բառով,

2) Հրամանի 2-րդ կետում «անձ Ռ. Գրդզելյանին» բառերը փոխարինել «անձին» բառով,

3) ուժը կորցրած ճանաչել Հրամանի 3-րդ կետը:

2. Հանձնարարել Գլխավոր վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Է.Տոնիկյանին՝ Գլխավոր վարչության պետի 2014 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 240-Ա հրամանը և սույն հրամանը ծանոթացնել Գլխավոր վարչության մամուլի քարտուղարին:

ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ

?????? ?????????
2016-11-11 10:46 AM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«08» 10 2014թ.

ՀՐԱՄԱՆ N 240-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատի պաշտոնատար անձ նշանակել Գլխավոր վարչության մամուլի քարտուղար Ռուբեն Գրդզելյանին:

2. Գլխավոր վարչության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ Ռ. Գրդզելյանին՝ ապահովել տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունների կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

3. Գլխավոր վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Է. Տոնիկյանին՝ պատրաստել սույն հրամանից բխող Գլխավոր վարչության մամուլի քարտուղար Ռ. Գրդզելյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրում լրացում կատարելու մասին համաձայնագրի նախագիծ և ներկայացնել ստորագրման:

մասին» N 240-Ա հրամանը և 2016 թվականի նոյեմբերի 11-ին «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N 240-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 201-Ա հրամանը:

Հարգանքով՝

Պաշտոնակատար Արսեն Մանուկյան